



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 0254/02/2010թ.  
Նախագահությամբ դատավոր՝ Ն.Գրիգորյան  
Դատավորներ՝ Վ.Հովսեփյան  
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ թիվ 0254/02/2010թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

12-ին հոկտեմբերի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ դատավոր՝ Ի.Կարապետյանի  
դատավորներ՝ Գ.Գրիգորյանի  
Ջ.Օհանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Երմոնյա Սմբատի Ծատրյանի ընդդեմ Սիլվա Գրիգորիի Բալասանյանի, Ստեփանակերտի նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյանի, ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 2/6-րդ մասի նկատմամբ 2008թ. հունիսի 4-ին կնքված և Ստեփանակերտ քաղաքի նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի կողմից վավերացված նվիրատվության պայմանագիրը և նշված մասի նկատմամբ կատարած սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով՝ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 30-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Աշոտ Ապրեսյանի և երրորդ անձի ներկայացուցիչ Վազգեն Իշխանյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Ձ Ե Ց

#### 1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ իր և Սիլվա Բալասանյանի միջև 2008թ. հունիսի 4-ին և Ստեփանակերտ քաղաքի նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի կողմից վավերացված նվիրատվության պայմանագիրն,

ինչպես նաև նշված մասի նկատմամբ Միլվա Բալասանյանի անվամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-4 մատյանի 074426 համարի տակ 2008թ. հունիսի 18-ին կատարած սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. ապրիլի 16-ի վճռով Ե.Ծատրյանի հայցը մերժել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010թ. հունիսի 30-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել հայցվորի ներկայացուցիչ Աշոտ Ապրեսյանը և երրորդ անձի ներկայացուցիչ Վազգեն Իշխանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը պնդում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ, 195-րդ, 199-րդ, 594-րդ, 1247-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածը, չի ղեկավարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածով, չի կիրառել կիրառման ենթակա ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ, 313-րդ, 303-րդ, 304-րդ, 305-րդ, 599-րդ հոդվածների պահանջները և «ԼՂՀ պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին» Հրահանգի 121-րդ և 124-րդ կետերի պահանջները:

Նշված պնդումները բողոք բերողները հիմնավորում են հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածը, նշել է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր կողմից վկայակոչած փաստերը, սակայն անհասկանալի պատճառներով կասկածանքի տակ է դրել և չի ընդունել Երմոնյա, Վարդան և Մարինա Ծատրյանների ցուցմունքները, և խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, իր որոշման հիմքում դրել է միայն պատասխանողի հակասական ցուցմունքները, դրանով խախտել է գործի արդարացի դատաքննության իրավունքը:

Ըստ բողոք բերողների, ԼՂՀ վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1247-րդ հոդվածը, որի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակցի մահը հիմք է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում նրա բաժինը որոշելու և նույն օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված կարգով ընդհանուր գույքը բաժանելու կամ մահացած մասնակցի բաժինը դրանից առանձնացնելու համար, առանց հաշվի առնելու, որ նվիրատվության պայմանագրով Ե.Ծատրյանը Ս.Բալասանյանին է նվիրել ոչ միայն Ե.Ծատրյանի կողմից ամուսնու մահից հետո ժառանգություն ստացած վիճելի տան 1/6-րդ մասը, այլև ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող տան 1/6-րդ մասը, որը չէր կարող օտարվել առանց մյուս համասեփականատերերի համաձայնության:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածը սահմանում է, որ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո, որպիսի գործողություն տվյալ պարագայում չի կատարվել, այսինքն Ե.Ծատրյանի կողմից ժառանգությունն ընդունելուց հետո անգամ ընդհանուր համատեղ սեփականությունում 1/6-րդ մասը կազմող նրա բաժինը չի առանձնացվել:

Բողոք բերողները գտնում են, որ Ստեփանակերտի նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի կողմից օրենսդրության պահանջների խախտմամբ է իրականացվել Ե.Ծատրյանի և Ս.Բալասանյանի միջև բնակարանի նվիրատվության պայմանագիր կազմելու գործընթացը, քանի որ համաձայն «ԼՂՀ պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին» Հրահանգի 111-րդ կետի, ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործարքները կնքելիս, պահանջվում է բոլոր սեփականատերերի համաձայնությունը, եթե նրանց միջև կնքված պայմանագրով /համաձայնագրով/ այլ բան չի նախատեսված:

Ըստ բողոք բերողների, դատաքննությամբ հիմնավորվել է, որ խախտվել են գործարքի վավերության պայմանները: Գործարքը վավեր ճանաչելու համար նախ անհրաժեշտ է, որ գործարքը կնքող սուբյեկտներն իրավասու լինեն այն կնքելու համար և գործեն օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Բացի դրանից, հիմնավորվել է նաև, որ համատեղ սեփականության իրավունքով համասեփականատերերին պատկանող բնակարանի մի մասը Ե.Ծատրյանի և Ս.Բալասանյանի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջների խախտմամբ՝ Ե.Ծատրյանի կամքին հակառակ, նրա նկատմամբ գործադրված խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, որով խախտվել է Երմոնյա, Վարդան, Մարինա, Իրինա և Ռուզաննա Ծատրյանների սեփականության իրավունքը:

Բողոք բերողները խնդրում են բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 30-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1. Ստեփանակերտի քաղաքապետի 1999թ. ապրիլի 23-ի թիվ 241/19 որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Երևանյան փողոցի /ներկայումս՝ Վ.Սարգսյան/ թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանը հանձնվել է Երմոնյա Ծատրյանին՝ որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր /անձնական/ սեփականություն:

2. Ըստ 1999թ. մայիսի 28-ին տրված սեփականության իրավունքի վկայագրի՝ Երևանյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով սեփականատեր է նշվել Երմոնյա Ծատրյանը:

3. Ըստ Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2008թ. հունվարի 24-ին Ե.Ծատրյանին հասցեագրված նամակի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի սեփականաշնորհման գործընթացին մասնակցել և ճանաչվել են համասեփականատերեր Երմոնյա, Գրիգորի, Վարդան, Իրինա, Ռուզաննա Ծատրյանները և Մարինա Աբրահամյանը:

4. Ըստ 2008թ. ապրիլի 4-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ 1999թ. սեպտեմբերի 23-ին մահացած Գ.Ծատրյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 1/6-րդ բաժինը կազմող ժառանգական գույքի նկատմամբ ժառանգ է ճանաչվել կինը՝ Ե.Ծատրյանը:

5. Ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 2008թ. մայիսի 23-ի թիվ 094717 վկայականի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 2/6-րդ մասի նկատմամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 4-31 մատյանի թիվ 098183 համարի տակ գրանցված է Ե.Ծատրյանի սեփականության իրավունքը:

6. Ըստ 2008թ. հունիսի 4-ի Ե.Ծատրյանի և Ս.Բալասանյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի՝ Ե.Ծատրյանը Ս.Բալասանյանին սեփականության

իրավունքով անհատույց հանձնում է Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 2/6-րդ բաժինը:

7. Ըստ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 5-4 մատյանի 074426 համարի տակ 2008թ. հունիսի 18-ին գրանցվել է Ս.Բալասանյանի բաժնային սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 2/6-րդ բաժնի նկատմամբ և տրվել է թիվ 094908 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը:

#### **4. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով:

Նույն օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո:

Ընդհանուր գույքը բաժանելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1247-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր համատեղ սեփականության մասնակցի մահը հիմք է գույքի նկատմամբ իրավունքում նրա բաժինը որոշելու և նույն օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված կարգով ընդհանուր գույքը բաժանելու կամ մահացած մասնակցի բաժինը դրանից առանձնացնելու համար: Այդ դեպքում ժառանգությունը բացվում է մահացած մասնակցի բաժնին հասանելիք ընդհանուր գույքի, իսկ բնեղենով բաժանելու անհնարինության դեպքում՝ նման բաժնի արժեքի նկատմամբ:

Սույն գործի նյութերից պարզվել է, որ Ստեփանակերտի քաղաքապետի 1999թ. ապրիլի 23-ի թիվ 241/19 որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Երևանյան փողոցի /ներկայումս՝ Վ.Սարգսյան/ թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանը հանձնվել է Երմոնյա Ծատրյանին որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր /անձնական/ սեփականություն: Համաձայն 2008թ. ապրիլի 4-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ 1999թ. սեպտեմբերի 23-ին մահացած ընդհանուր սեփականության մասնակից Գ.Ծատրյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի թիվ 15 բնակարանի 1/6-րդ մասը կազմող ժառանգական գույքի նկատմամբ ժառանգ է ճանաչվել կինը՝ Ե.Ծատրյանը, որը գրանցել է իր իրավունքը վիճելի բնակարանի 2/6-րդ մասի նկատմամբ: Այսինքն, Ծատրյաններին պատկանող վիճելի գույքում ընդհանուր համատեղ սեփականության մասնակիցներից մեկի մահը հիմք է հանդիսացել նոտարի կողմից ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը որոշելու միջոցով ընդհանուր գույքի նկատմամբ մահացած մասնակցի բաժինը որոշելու և ժառանգության վկայագիր տալու համար: Ե.Ծատրյանին տրված ժառանգության վկայագիրը և թիվ 2624 գրանցումը չեն բողոքարկվել ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից:

Գործի նյութերով հաստատված է նաև, որ 2008թ. հունիսի 4-ի Ե.Ծատրյանի և նրա դստեր՝ Ս.Բալասանյանի միջև կնքվել է նվիրատվության պայմանագիր, որով Ե.Ծատրյանը Ս.Բալասանյանին սեփականության իրավունքով անհատույց հանձնում է Ստեփանակերտ քաղաքի իրեն սեփականության իրավունքով պատկանող Վ.Սարգսյան փողոցի թիվ 20 շենքի

թիվ 15 բնակարանի 2/6-րդ բաժինը: Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 192-րդ հոդվածի երկրորդ մասի՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի իր բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինել՝ դրա հասուցելի օտարման դեպքում պահպանելով նույն օրենսգրքի 195-րդ հոդվածում նախատեսված կանոնները:

Նույն օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը /նվիրատուն/ մյուս կողմի /նվիրառուի/ սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք...:

ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Ե.Ծատրյանի և նրա դստեր՝ Ս.Բալասանյանի միջև կնքվել է անհատույց գործարք, որի կնքման պահին վիճելի բնակարանի 2/6-րդ մասերի նկատմամբ գրանցված էր Ե.Ծատրյանի սեփականության իրավունքը:

Ըստ բողոք բերողների՝ Ե.Ծատրյանի և Ս.Բալասանյանի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջների խախտմամբ, Ե.Ծատրյանի կամքին հակառակ, նրա նկատմամբ գործադրված խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո...կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձը ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը /ստրկացուցիչ գործարք/, տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի առաջին մասի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, մինչդեռ վկայակոչած փաստի վերաբերյալ հայցվորը դատարանին ոչ մի հիմնավոր ապացույց չի ներկայացրել:

Այսպիսով, սույն քաղաքացիական գործով առկա ապացույցներով չի հիմնավորվում, որ Ե.Ծատրյանի և Ս.Բալասանյանի միջև գործարքը կնքվել է Ե.Ծատրյանի կամքին հակառակ, նրա նկատմամբ գործադրված խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո:

Քանի որ սույն գործով բացակայում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածով նախատեսված գործարքների անվավերության հիմքերը, ուստի ԼՂՀ Գերագույն դատարանը նշված հոդվածը կիրառելի չի համարում:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկներն անհիմն են և գործի ըստ էության ճիշտ լուծման համար էական նշանակություն չունեն, ուստի ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով սահմանված՝ դատական ակտն անփոփոխ թողնելու ԼՂՀ Գերագույն դատարանի լիազորության կիրառումը անհրաժեշտ է հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոնշյալ

հողվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Դատական ակտն անփոփոխ թողնելիս ԼՂՀ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 251-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվորի ներկայացուցիչ Աշոտ Ապրեսյանի և երրորդ անձի ներկայացուցիչ Վազգեն Իշխանյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 30-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Զ.ՕՀԱՆՅԱՆ**